ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## ՈՐՈՇՈՒՄ

-- -------- 2021 թվականի №---Ա

քաղ. Երևան

## «ԳՈՌՍՈՒ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ԳՈՒՄԱՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄ ՊԱՐՏԱՎՈՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2009 թվականի սեպտեմբերի 30-ի «ԳՈՌՍՈՒ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ռադիոհաճախականության օգտագործման թույլտվություն տրամադրելու մասին» №618Ա որոշմամբ «ԳՈՌՍՈՒ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրվել է ռադիոհաճախականության օգտագործման №0656 թույլտվությունը,

բ) «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 17.1 հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարը սահմանվում է տարվա համար և ենթակա է վճարման յուրաքանչյուր եռամսյակի համար հավասարաչափ՝ մինչև տվյալ եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը ներառյալ, իսկ 10-րդ մասի համաձայն՝ ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարների գումարների վճարումն օրենքով սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում գանձվում է տույժ՝ ուշացման յուրաքանչյուր օրվա համար պակաս վճարված վճարի 0,075 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան 730 օրվա համար (մինչև 2018 թվականի հունվարի 1-ը՝ ուշացման յուրաքանչյուր օրվա համար պակաս վճարված վճարի 0,15 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան 365 օրվա համար),

գ) Ընկերությունը չի վճարել ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարները, ինչի մասին բազմիցս տեղեկացվել է, այդ թվում՝ 2020 թվականի հոկտեմբերի 5-ի №ՍՇ/34.2-Մ2-9/4209-2020, 2021 թվականի հունվարի 11-ի №ՍՇ/34.2-Մ2-9/27-2021 և ապրիլի 2-ի №ՍՇ/34.2-Մ2-9/1026-2021 գրություններով,

դ) Ընկերության կողմից Օրենքի 17.1 հոդվածի պահանջների խախտման՝ ռադիոհաճա-խականության օգտագործման վճարների չվճարման փաստի ուսումնասիրության նպատակով 2021 թվականի ապրիլի 8-ին Հանձնաժողովը վերջինիս նկատմամբ հարուցել է վարչական վարույթ, որի մասին ծանուցել է 2021 թվականի ապրիլի 8-ի №ԳԲ/34.2-Մ2-9/1109-2021 գրությամբ,

ե) Ընկերությունը հարուցված վարչական վարույթի շրջանակում ուսումնասիրվող հարցի կապակցությամբ որևէ փաստարկ կամ հիմնավորում չի ներկայացրել,

զ) իրականացված վարչական վարույթի արդյունքում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է Օրենքի 17.1 հոդվածի պահանջները և մինչ օրս չի կատարել ռադիոհա-ճախականության օգտագործման պարտադիր վճարների և ժամկետանց պարտա-վորության համար հաշվարկված տույժերի վճարման պարտավորությունը, որը 2021 թվականի մայիսի 5-ի դրությամբ կազմում է 1 046 274 (մեկ միլիոն քառասունվեց հազար երկու հարյուր յոթանասունչորս) դրամ, որից 170 873 (հարյուր յոթանասուն հազար ութ հարյուր յոթանասուներեք) դրամ գումարի մասով (հաշվարկված՝ մինչև 2018 թվականի հունիսի 20-ը) և 412 388 (չորս հարյուր տասներկու հազար երեք հարյուր ութսունութ) դրամ գումարի մասով (հաշվարկված՝ 2018 թվականի հունիսի 21-ից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 24-ը) առկա են Հայաստանի Հանրապետության պետական բյուջե գումարի փոխանցումը պարտավորեցնելու մասին Հանձնաժողովի համապատասխանաբար 2018 թվականի հունիսի 20-ի №254Ա և 2019 թվականի դեկտեմբերի 24-ի №497Ա որոշումները, որոնք գտնվում են հարկադիր կատարման փուլում,

է) 2019 թվականի դեկտեմբերի 25-ից մինչև 2021 թվականի մայիսի 5-ի դրությամբ ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարների և ժամկետանց պարտավորության համար հաշվարկված տույժի վճարման՝ Ընկերության պարտավո-րությունը կազմում է 462 013 (չորս հարյուր վաթսուներկու հազար տասներեք) դրամ, որից 300 000 (երեք հարյուր հազար) դրամը ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարն է, իսկ 162 013 (հարյուր վաթսուներկու հազար տասներեք) դրամը՝ ժամկետանց պարտավորության համար հաշվարկված տույժը, և

հիմք ընդունելով Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետը, 17.1 հոդվածի 11-րդ մասը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Ընկերությանը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից տասնօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցել №0656 թույլտվությամբ նախատեսված ռադիոհաճախականության օգտագործման

պարտադիր վճարների մասով 2019 թվականի դեկտեմբերի 25-ից մինչև 2021 թվականի մայիսի 5-ը հաշվարկված 462 013 (չորս հարյուր վաթսուներկու հազար տասներեք) դրամ պարտքը, որից 300 000 (երեք հարյուր հազար) դրամը ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարն է, իսկ 162 013 (հարյուր վաթսուներկու հազար տասներեք) դրամը՝ ժամկետանց պարտավորության համար հաշվարկված տույժը:

2. Ընդունել ի գիտություն, որ Ընկերությունն իրավասու է՝

1) սույն որոշման հրապարակումից հետո երեսուն օրվա ընթացքում միջնորդել Հանձնաժողովին՝ վերանայելու այն.

2) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
-- ---------- 2021թ.